





խումբին եւ երրորդ ճոխացած խումբին միջեւ:

Եթէ ուշադրութեամբ դիտելու ըլլանք, այս երկրորդ խումբի պատկանող ձեռագիրները՝ էական տարբերութիւն մը չունին առաջինէն: Մինչ առաջին խումբինները անխափան՝ ունէին միեւնոյն կազմը, ու յաւելուածները կատարուած էին լոկ կանոնին վերջաւորութեան, այս խումբի ձեռագիրները կու գան կոտորելու այդ միւս ձեռագիրները, եւ նոր ընթերցուածները կը ներմուծեն հինքուն միջեւ: Ասոնք թիւով 12 ձեռագիրներ են, որոնք համեմատելով առաջինին հետ՝ ունին հետեւեալ յաւելուածները.

Ծննդոց զոյգ ընթերցուածներէն յետոյ, թիւ 487, 1484, 617, 744, 1031 (տարի՝ 1386, ԺԳ. դար, 1466, 1492, ԺԵ. դար) (ձեռագիրները ունին Առակաց դրքի «Ուր-դեակ արբ ըսուր... կորեաւ վասն անօրէնութեան իւրոյ» (Ե, 15-23). իսկ թիւ 1274 եւ 602 (ԺԳ. դար, 1626) ձեռագիրները ունին նոյն Առակաց դրքը աւելի ընդարձակ կերպով (Դ, 20 - Ե, 23):

Պօղոսի թուղթէն առաջ, թիւ 617, 744, 1031, 602, 1743 (տարի՝ 1466, 1492, ԺԵ. դար, 1626, ԺԶ. դար) ձեռագիրները ունին Պետրոսի Ա. թուղթէն «Կանայք հնազանդ լինել... զօրհնութիւնս ժառանգիցէք» (Գ, 1-9), որոնցմէ թիւ 1743 ձեռագիրը զեղծած է Պօղոսի թուղթը:

Մատթէոսի աւետարանին փոխարէն, թիւ 1086, 148, 1319, 1163 (տարի՝ 1413, 1489, 1530, 1583) ունին Յովհաննու աւետարանէն հատուած մը. «Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին... հաւատացին ի նա աշակերտքն նորա» (Բ, 1-11):

Եւ հուսկ կանոնին վերջաւորութեան, ունին «Յանունդ քո կենդանի» աղօթքը թիւ 1086, 1319, 1163 ձեռագիրները. «Փառք քեզ թագաւոր յաւիտենից որ աճեցուցանես» աղօթքը՝ թիւ 1743 ձեռագիրը, իսկ երկու աղօթքները միասին՝ թիւ 617, 744, 1031, 602 ձեռագիրները:

Պորագիրներու նկատմամբ ոչ մէկ նորութիւն կը գտնենք այս խումբի պատկանող ձեռագիրներուն մէջ, որովհետեւ

գրեթէ հոս ալ նոյնութեամբ կը կրկնուին առաջին խումբի խորագիրները:

Պատկի արարողութիւնը. Եթէ ուզենք վերակազմել պատկի արարողութիւնը, օգտագործելով առաջին, երկրորդ, ինչպէս նաեւ երրորդ խումբէն դուրս մնացած ինքնայատուկ նկարագիր ունեցող ձեռագիրներու խորագիրները, դուրս ձգելով այն ամէն բան՝ որ եկամուտ է երրորդ ընտանիքէն, մեզի կը թուի ծիսական հետաքրքրական մանրամասնութիւններու հանդիպիլ:

Պատկի արարողութեանէն առաջ, իբր պատրաստութիւն այդ մեծ հանդէսին, քահանային պարտականութիւնն է «նախ խոստովանութեամբ քննել զվարս նոցա, եւ ըստ խոստովանութեանն արժանացին օրհնութեան (պսակին)»: Այս է պատուէրը Ս. Ղազարի հնագոյն Մաշտոցներէն թիւ 199ի, գրուած 1216 թուականին, որու արձագանգը կը գտնենք յաջորդաբար 1434 եւ 1641 տարիներու օրինակուած Մաշտոցներու մէջ:

Պատկի բուն արարողութիւնը կը սկսի գաւիթին մէջ, եկեղեցիին դրան առջեւ. «տանին զհարսն եւ զիեսայն ի դուռն եկեղեցւոյն», ուր կը կատարուի վերեւ յիշուած խոստովանութիւնը՝ 1489ի Մաշտոցին համաձայն. մինչ ԺԵ. դարու օրինակ մը (թիւ 138) դեռ աւելի բացայայտելով կ'ըսէ. «խոստովանեցուցանէ քահանայն զնոսա ճշմարիտ հաւատով»: 1497ի Մաշտոցը կու տայ հետաքրքրական մանրամասնութիւն մը ըսելով. «լուցանեն մոմեղէնս առաջի սուրբ խաչին եւ սրբոյ տաճարին»:

Արարողութիւնը կը սկսի «Ուրախ եղէ ես ոյք ասէին» սաղմոսով, որմէ ետք՝ քահանան «առեալ զձեռն աղջկանն՝ տայ յերիտասարդն, եւ կացուցանէ ընդ աջմէ նորա» (Ձեռ. թիւ 199, 615, 1483), մինչ 1497ի Մաշտոցը մանրամասնելով «զնէ քահանայն զաջոյ ձեռնս յերեարս», ասոր հակառակ, 1548ին Յովասափ տաղասաց կը գրէ իր Մաշտոցին մէջ «քահանայն տայ զձախ ձեռն հարսինն ի յաջ ձեռն

փեսին», եւ կամ՝ «զաջ ձեռն տայ ի յաջ ձեռն փեսին» (Ձեռ. թիւ 1686): Այս արարողութիւնը կատարուած պահուն, ԺԴ. դարու Մաշտոցի մը համաձայն (թիւ 336) քահանան կ'ըսէ «կալար զաջոյ ձեռանէ իմմէ» սաղմոսը:

Կարգ մը ձեռագիրներ՝ գաւիթին մէջ կատարուած արարողութեան հանդիսաւորութիւն մը տալու համար՝ շարական ալ կը պահանջեն. այսպէս «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» (Ձեռ. թիւ 138, 1756, 1895), «Հարսնացեալ Քրիստոսի» (Ձեռ. թիւ 1756), «Նայեա ի մեզ» (Ձեռ. թիւ 2061), «Ուրախ լեր եւ ցնծա» (Ձեռ. թիւ 1420), «Սորան սրբութեան» եւ «ասեն մեղեդի Ծննդեան. Այսաւր աւե.» (Ձեռ. թիւ 1896), «Չուարճացիր պսակ» եւ «Սուրբ Աստուած որ մարմնացար ի սուրբ կուսէն ողորմեա մեզ» (Ձեռ. թիւ 1686, 1314), որոնք բոլորն ալ եկամուտ են, եւ ինքնքրի մը սպրդած են կանոնին մէջ, բացի «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» շարականէն, որ շատ հին ատենէ ի վեր մտած պէտք է ըլլայ պսակի արարողութեան մէջ, ինչպէս կը տեսնուի 1338ին օրինակուած (թիւ 27) Մաշտոցին մէջ:

Գաւիթի արարողութիւնը կ'աւարտի «Սոստովան եղերուք Տեառն» սաղմոսով, որմէ ետք, ինչպէս մկրտութեան եւ այլ բաղնիքի արարողութիւններու մէջ, երբ քահանան հասնի «բացէք ինձ զգրուես» սաղմոսին, «բացեալ զդուռն մտանեն յեկեղեցին, ասելով սաղմոս. Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր»:

Արարողութեան երկրորդ մասը կը սկսի եկեղեցիին մէջ, ուր ձեռագիրները ընդհանրապէս կը պահանջեն որ ըսուի «Ժամանակ եկեղեցւոյ. Զխաղաղութիւն չընորհեա եկեղեցւոյ քում սրբոյ»: Ունին սակայն բաղնիքի ձեռագիրներ, որոնք առանց գաւիթի արարողութեան, կը սկսին պսակը հետեւեալ խորագրով. «Քահանայն տանի զհարսն եւ զիեսայն յեկեղեցին, առաջի սրբոյ սեղանոյն» (Ձեռ. թիւ 178, 187, 1274), կամ «առաջի բեմին» (Ձեռ. թիւ 929): Հոն է որ քահա-

նան «զնէ զխաչն ի վերայ երկոցունց դըլխոցն» (Ձեռ. թիւ 27, 929, 1274, 1686), մինչ 1436ի եւ 1464ի օրինակուած Մաշտոցները կ'ընեն փոքրիկ զանազանութիւն մը խաչի եւ պսակի միջեւ ըսելով. «Դնէ քահանայն խաչ ի դուռն երկոցունց», եւ աղօթք մը կարդալէ ետք՝ «քահանայն դիցէ զպսակն ի դուռն» (Ձեռ. թիւ 178, 187). այս զանազանութիւնը աւելի պիտի չեւտուի երրորդ խումբի պատկանող ձեռագիրներուն մէջ:

Այս զոյգ արարողութիւնները, թէ՛ գաւիթի եւ թէ՛ եկեղեցւոյ խորանին առջեւ կատարուածը, որ վերակառուցինք, քաղելով ինչ ինչ ձեռագիրներէ, չենք գտներ ամէն ձեռագիրի մէջ, մանաւանդ թէ, ամէնէն աւելի հին եւ ընտիր ձեռագիրները՝ զուրկ են որեւէ խորագիրէ, ու պսակի արարողութիւնը կը սկսին «Տէր ի զօրութեան քում» սաղմոսով ու անոր յաջորդող ընթերցուածներով:

Եթէ արարողութեան մինչեւ այս կէտը՝ բաղնիքի ու զանազան էին Մաշտոցներու խորագիրները, արարողութեան էական մասը սկսելով՝ կու գան նոյնանալու իրարու հետ, եւ բոլոր ձեռագիրները միասին կը սկսին պսակի բուն արարողութիւնը «Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի» սաղմոսով, որու կը յաջորդեն ընթերցուածներն ու աղօթքները:

Ընթերցուածներու շարքին, զոյգ Ծըննդոց գիրքերն աւարտելուն, Եսայիի մարգարէութիւնը սկսելէ առաջ, 1497ին, 1503ին, 1548ին գրուած Մաշտոցները, կարծէք կամայական կերպով կը պատուիրեն քահանային «խաչ դիր ի դուռն փեսային եւ հարսին» (Ձեռ. թիւ 1320, 138, 1895, 2061), բան մը՝ որ ուրիշ ձեռագիրներ արարողութեան սկիզբը պահանջեցին, ինչպէս տեսանք: Իրականութեան մէջ, պսակը փեսային ու հարսին դուռնը դնելու ժամանակը, ո'չ արարողութեան սկիզբն է եւ ո'չ ընթերցուածներու միջանկեալ, այլ հին ու նոր կտակարանները աւարտելուն, աղօթքները սկսելէ առաջ: Այսպէս է խորագիրը Ս. Ղազարի Թ. Ժ. դարու (թիւ 457) երկաթագիր Մաշտոցի խորա-







փեսային եւ հարսին»։ Եւ հուսկ չորրորդ խորագիր մը՝ որ յատուկ է այս խումբի ձեռագիրներուն «Եւ արկանէ բաժակ ի գաւաթն» որու կը հետեւի «Տէր Աստուած մեր որ զամենայն ինչ» գիրնին օրհնելու աղօթքը։ Կարգ մը ձեռագիրներ կանոնը վերջանալուն կը յանձնարարեն «տեառնադէ քահանայն զբաժակն եւ տայ ըմպել նոցա»։

Շատ կանոնաւոր կերպով դասաւորուած են նաեւ շարականները։ Կանոնին սկիզբը՝ «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» (Թիւ 1157, 1264, 1055, 1891, 1106), «Ուրախ լեր եւ ցնծա» (Թիւ 165), «Սուրբ Աստուած որ եկիր եւ դալոց» (Թիւ 1055, 338, 1106), «Ուրախացիր պսակ կուսից» (Թիւ 1157, 1264, 1891), «Այսաւր ցնծան դաւք» (Թիւ 1055)։ Իսկ կանոնը աւարտելուն՝ «Ով երանելիդ ամենեցուն» եւ «Որ զերկնաւոր թագաւորութիւնդ» (Թիւ 1157, 1264, 1981, 165, 824, 480, 1106), կամ «Ուրախացիր պսակ կուսից» եւ «Ով երանելիդ ամենեցուն» (Թիւ 1505)։

Այս խումբին բերած մեծադոյն նորութիւններէն մէկն է՝ կանոնը կանխող յառաջաբանը, որ յատուկ անունով մը կոչուած է «Սրատ զգուշութեան»։

Տեսանք արդէն թէ հնագոյն Մաշտոցներէն մէկը, գրուած 1216ին (Թիւ 199, ինչպէս նաեւ Թիւ 165, 1483), պսակի արարողութեան սկիզբը, դաւթին մէջ, երբ քահանան «առեալ զձեռն աղջկանն՝ տայ յերիտասարդն», իսկոյն կ'աւելցնէ «Եւ խրատէ յաստուածային պատուիրանն»։ 1497ի Մաշտոցը (Թիւ 1420) «ուսուցանէ նոցա զպատուիրանն Աստուծոյ... վստահացեալ յիրեարս եւ առնուերաշխաւորս»։ 1591ին (Թիւ 860) նոյնը տարբեր ձեւով կը պատուիրէ քահանային որ «ի դուռն եկեղեցւոյն» սորվեցնէ պսակողներուն թէ «որպէս աւրէն է կալ ըստ կամացն Աստուծոյ»։ Իսկ 1682ին (Թիւ 1536) «առնու քահանայն զհարսն եւ զփեսայն եւ տանի յեկեղեցին... եւ առնու զհաւանութիւն ի նոցանէ»։

Ինչպէս կը տեսնուի այս մէջբերութիւններէն, համեմատութեամբ 80 Մաշտոց-

ներու, շատ քիչ ձեռագիրներ միայն ունին նման խորագիր մը, եւ այն եւս տարտամ, այսինքն պսակողներէն հաւանութիւնը առնելու կերպը՝ ամբողջովին ձգուած է քահանային աղատութեան, առանց հաստատուն բանաձեւի կամ արարողութեան մը։

Ս. Ղազարի ձեռագիրներուն մէջ, նման բանաձեւուած արարողութեան կը հանդիպինք 1345ի օրինակուած Սիսի Մաշտոցի մէջ (Թիւ 1173)։ Չենք վարանիր հաստատելու՝ որ այս արարողութիւնը թարգմանութիւն մը ըլլայ լատին ծիսարանէն, ուր կան ինչ ինչ աղբեցութիւններ յունականէն, որովհետեւ հոն գործածուած բառերն ու ամբողջ մտայնութիւնը խորթ են հայկական Մաշտոցին։ «Ով բարեպաշտ եւ ըստ հոգւոյ որդի մեր Ա. Ա...», «Ով ամենահամեստ եւ ըստ հոգւոյ դուստր մեր Ա. Ա...», «Քահանայն ասէ. Չեր կամաւք խնդրեցէք ընդ միմեանս սուրբ ամուսնութեամբ զուգաւորիլ առանց հարկի եւ պատրանաց ուրուք. եւ նոքա ասեն. այո, այո», «ցանկ դաւհնած ջուրն ի վերայ մատանւոյն» են։ Այս արարողութիւնը անշուշտ հայացնելու նպատակով միջանկեալ խառնուած է «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» շարականը։

Նոյն այս արարողութիւնը աւելի ընդարձակ և ճոխացած կը գտնենք ԺԷ-ԺԸ դարու Մաշտոցի մը մէջ (Թիւ 1975)։ Այս զոյգ ձեռագիրները չունին հայկական Մաշտոցի նկարագիր, մանաւանդ որ մնացած են կղզիացած եւ աղբեցութիւն վրայ, ուստի կ'անցնին քննելու հայկական բնոյթ ունեցող Մաշտոցները։

Երկրորդ բանաձեւուած արարողութիւն մը կը գտնենք 1489ի Մաշտոցին մէջ (Թիւ 148) որ ունի հետեւեալ խորագիրը. «Սրատ զգուշութեան զոր տացէ քահանայն հանգերձելոցն պսակ առնուլ կանխաւ... Գիտասջիք որդեակը որ հանգերձեալ էք կապիլ ընդ միմեանս լծով աւրինաւոր ամուսնութեան՝ են», ուր քահանան կը բացատրէ ամուսնութեան խոր-

հուրդին գլխաւոր կէտերը, անոր գերբնական նկարագիրը, որովհետեւ «աւրինադրեաց Աստուած», անոր անլուծանելի ըլլալը «կապին եւ միաւորին այրն եւ կինն եւ չէ հնար այլ քակիլ ի միմեանց», թէ կրնան պատահիլ կեանքի ընթացքին զանազան ձախորդութիւններ «կաղութիւն, կուրութիւն, խեղութիւն» են։ Այս երկարաշունչ խրատը աւարտելուն, քահանան կը պահանջէ հաւանութիւնը պսակողներուն. «Ձայտսիկ, ով որդեակք, ի կարճոյ համառօտեցի յականջը... պահանջէ այժմ ի ձէնջ աստուածային աւրէնքն... զխոստումն կատարման պատուիրանացն Աստուծոյ, զոր առջի ձեր խաւսեցայ. խոստանա՞ք առջի Աստուծոյ...»։ Ու երկու պսակողները առանձին առանձին կու տան իրենց հաւանութիւնը։

Երրորդ խումբի պատկանող տասը ձեռագիրներէն, միայն երեքը (Թիւ 165, 824, 1891) ունին այս յառաջաբանը իր հարազատ ձեւին մէջ, մինչ ուրիշ չորս ձեռագիրներ (Թիւ 480, 1106, 1157, 1264) զանց կ'ընեն «Գիտասջիք որդեակք» երկար խրատը, ու անոր փոխարէն կը գործանան «նախ պարտ է քահանային ուսուցանել զամենայն որպիսութիւնն աւրինացն Աստուծոյ» խորագրով, որու կը յաջորդէ «Տէ՞ր ես» հարցումն ու անոր յատասխանը։ Իսկ Թիւ 338, 932 եւ 1055 ձեռագիրները ամենեւին զանց ըրած են, ու կանոնը կը սկսի «Աստուած յաւիտենական որ զանդոյգս» աղօթքով։

Այս խումբի ձեռագիրներէն դուրս՝ 1489ի Մաշտոցը (Թիւ 148), երկրորդ խումբի պատկանելով հանդերձ ունի «խրատ զգուշութեան»։ Նոյնպէս է նաեւ Թիւ 1737 ձեռագիրը, գրուած 1695ին։ Առաջին ընտանիքի Թիւ 1686 (տարի՝ 1573)

Եւ Թիւ 1314 (տարի՝ 1684) ձեռագիրները ունին նման յառաջաբան մը, որ քաղուածաբար յօրինուած պէտք է ըլլայ ընդարձակէն։ Իսկ 1673ի Մաշտոցը (Թիւ 1269) ունի նոյնը՝ ինքնայատուկ նկարագիրով ու խմբագրութեամբ։

Արդ եզրակացնելով, կարելի է հետեւեալ կերպով ամփոփել մեր ըսածները։ Պսակի խորհուրդի բնագիրը ունեցած է երկու մեծ հանգրուան, հին եւ նոր։ Հինը կը սկսի անյիշատակ ժամանակներէ ու պահպանուած է մինչեւ ԺԶ. դարու Մաշտոցներու մէջ. կ'սկսի շատ նախնական ու պարզ է, ունի հինգ ընթերցումներ եւ երկու աղօթքներ։ ԺԵ. դարէն առաջ սկսած է կազմուիլ երկրորդ խմբագրութիւնը՝ որ իր լրումին հասած է ԺԶ.-ԺԷ. դարերուն. ասոր յատուկ է աղօթքներու եւ ընթերցումներու բազմութիւնը։

Ձեռագիրներու զծած ուղին յստակ կերպով տեսնելէ ետք, եթէ քննելու ըլլանք ներկայիս մեր կիրարկած Մաշտոցներու արարողութիւնը, պիտի տեսնենք թէ տպագիր Մաշտոցը չի հետեւիր իր բոլոր կէտերուն մէջ ձեռագիրներու աւանդութեան. տպագրութիւնը՝ արդիւնք է անհատի մը տեսակէտներուն եւ համադրութեան, որ կատարած է առանց աչքի առջեւ ունենալու ձեռագրական խումբերու բաժանումները։ Թէ՛ Կաթողիկէ եւ թէ՛ Առաքելական եկեղեցւոյ մէջ կիրարկուած Մաշտոցներու մէջ՝ կը պակսին խորագիրներու պարզութիւնը, արարողութեան ընդհանուր յօրինուածքի հարադատութիւնը, ինչպէս նաեւ շարականներու ընտրութիւնը։ Այս ամէնը անհրաժեշտ կերպով կը կարօտին վերատեսու-

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ